

ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ

Առողջապահության և բժշկագիտության բնագավառում համագործակցության համաձայնագիր է ստորագրվել 1996թ. մարտի 19-ին, Երևանում:

Ստորագրող կողմերն են ՀՀ կառավարությունը և Թուրքմենստանի կառավարությունը:

Համագործակցության շրջանակներն են.

- առաջնային և մասնագիտացված բուժօգնություն,
- մոր և մանկան առողջության պահպանություն,
- կանխարգելիչ բժշկություն և շրջակա միջավայրի պաշտպանություն,
- ֆարմացիա և բժշկական տեխնիկա,
- սանատոր-առողջարանային բուժում,
- ռեաբիլիտացիա, պրոթեզ-օրթոպեդիկ գործ,
- արտակարգ իրավիճակների առողջապահական խնդիրներ, անվճար բուժօգնություն արտակարգ իրավիճակների ժամանակ,
- օպերատիվ առողջապահական տեղեկությունների փոխանակություն,
- անհետաձգելի անվճար բժշկական օգնություն երկու երկրների քաղաքացիներին՝ հյուրընկալվելիս,
- վճարովի հիմունքներով հիվանդների գործուղումներ ուղեգրերով՝ պլանային բուժօգնության դեպքում,
- ուղղակի համագործակցություն գիտական հաստոտությունների և հիվանդանոցների միջև,
- իրենց երկրներում կազմակերպվող կոնֆերանսների, համագումարների և նմանատիպ այլ միջոցառումների մասին փոխադարձ տեղեկացում: